ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Մանկավարժություն և հոգեբանություն
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Լ.Գ.Բաղդասարյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № _14_

«_06_» _02_ 2024 թ.

____ՄՀ/բ- 011 Փորձարարական հոգեբանություն__ ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **_031301.00.6 Հոգեբանություն_____**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **__031301.01.6 _Հոգեբանություն__**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **_____բակալավր_____**
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ **__Մանկավարժության և հոգեբանության__**
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ **_____առկա_____**
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ առկա **__II կուրս, _4-րդ կիսամյակ_____**
հեռակա _____

Դասախոս(ներ) ՝ **_Վանանե Միրզոյան _____**
/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ**_mirzoyan900@gmail.com____**

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները ....
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ....
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ....
7. Ուսումնական աշխատանքները տեսակները ....
8. Դասավանդման մեթոդներ..... ...
9. Ուսումնառության մեթոդները ....
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ....
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ..... ...
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ ...
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ..... ...
    12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ..... ...
    12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ....
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում..... ...
14. Գնահատում..... ...
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում..... ...
    14.2. Հարցաշար..... ...
    14.3. Գնահատման չափանիշներ..... ...
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ..... ...

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Փորձարարական հոգեբանություն» դասընթացը կարևորվում է հոգեբանության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է Հոգեբանություն կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակն է.

1. զինել գիտելիքներով հետազոտության քանակական և ոչ քանակական պլանների, չափողական սանդղակների մասին,
2. սովորեցնել կատարել գիրափորձի պլանավորում, իրականացում, սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում,
3. ներկայացնել հոգեբանական մեթոդների կիրառությունն ու նշանակությունը, դրանց առավելություններն ու թերությունները,
4. սովորեցնել իրականացնել հետազոտություն, կատարել արդյունքների մշակում, փոփոխականների կապերի գնահատում:

2.2. Դասընթացի խնդիրներն են……

- Սովորեցնել փորձարարական հոգեբանության տեսական հիմքերը:
- Բացատրել չափողական սանդղակները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին անցկացնել փորձարարական հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել ստացված վիճակագրական մշակման մեթոդների միջոցով:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

«Փորձարարական հոգեբանություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների տարրական գիտելիքները ընդհանուր հոգեբանությունից, վերլուծելու և եզրահանգումներ կատարելու, ինչպես նաև մատեմատիկական հաշվարկներ կատարելու հմտությունների առկայությունը:

Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

«Փորձարարակ հոգեբանություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա հոգեբանական փորձարարական հոգեբանության առարկայի հիմնական հասկացությունները, մեթոդաբանության սկզբունքները, հոգեբանական մեթոդների առավելություններն ու թերությունները,
2. իմանա չափողական սանդղակները,
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի . գիտության մեջ կիրառվող հնարքներին,
5. տիրապետի հետազոտվողներին ներկայացվող բարոյագիտական պահանջներին,
6. կարողանա կատարել արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն,

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf

Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

7. կարողանա առարկայի շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,
ԳԿ2 կազմակերպելու և պլանավորելու ունակություն,
ԳԿ3 հենքային և ընդհանուր գիտելիքներ,
ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
ԳԿ7 տարրական համակարգչային գիտելիքներ,
ԳԿ9 խնդիրների լուծում:

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

ԱԿ3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
ԱԿ7 ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,
ԱԿ8 հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական և դիտարկիչ միջոցների արդյունքերը:

4. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].

«Փորձարարական հոգեբանություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել իր մասնագիտական գործունեության ընթացքում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և հոգեբանության բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

5. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**5 կրեդիտ/150 ժամ**	

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն	22	
Գործնական աշխատանք	24	
Սեմինար պարապմունք		
Լաբորատոր աշխատանք	24	

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

Ինքնուրույն աշխատանք	100	
Ընդամենը	150	
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	քննություն	

6. **Ուսումնական աշխատանքների տեսակները**[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

համար ուսանողը պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Գործարար խաղեր** – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- **Էսսե** – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- **Կլոր սեղան** – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- **Կոնկրետ իրավիճակների վերլուծություն** – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

7. **Դասավանդման մեթոդներներն են՝[6]** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր….

8. **Ուսումնառության մեթոդներն են[7]՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում,

---

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում….

9. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Փորձարարական հոգեբանության ծագումը, առարկան	2		2		22
2.	Փորձարարական հոգեբանական դպրոցներ:	2		4		2
3	Չափողական սանդղակներ և վիճակագրության պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդներ	2		2		2
4	Գիտափորձի մեթոդի էությունը, դերն ու նշանակությունը հոգեբանության մեջ:	2		2		2
5	Գիտափորձի արտաքին և ներքին վալիդականություն:	2		2		2
6	Գիրափորձի պլանավորումը հոգեբանության մեջ	2		2		2
7	Սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում:	2		2		2
8	Հետազոտության քանակական և որակական պլաններ	2		2		4
9	Գիտական հետազոտության փուլերը:	1		2		2
10	Գիտության մեջ կիրառվող հնարքները: Գիտական մտավախության տեսակները	1		2		2
11	Գիտափորձի արդյունքների առաջնային և երկրորդական վիճակագրական մշակման մեթոդներ	2		4		4
ԸՆԴԱՄԵՆԸ		22		24		24

[8] Նման է օրացուցային պլանին

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[9]
1.	Փորձարարական հոգեբանության ծագումը, առարկան	Փորձարարական հոգեբանության ծագումն ու զարգացումը: Է. Վեբերի, Գ. Հելմհոլցի, Գ. Էբինհաուզի, Ս. Հոլի և այլ խոշորագույն գիտնականների ներդրումը փորձարարական հոգեբանության զարգացման գործում:	2	ՊԳ1,2 ԼԳ 2
2.	Փորձարարական հոգեբանական դպրոցներ:	Գերմանական դպրոցը: Ֆրանցիական դպրոցը: Վյուրցբյուրգյան դպրոցը: Անգլիական դպրոցը: Ամերիկյան դպրոցը: Ռուսական դպրոցը:	2	ՊԳ1 ԼԳ3
3.	Չափողական սանդղակներ և վիճակագրության պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդներ	Անվանական, հերթականության, ինտերվալային, հարաբերությունների սանդղակներ:	2	ՊԳ1,3
4.	Գիտափորձի մեթոդի էությունը, դերն ու նշանակությունը հոգեբանության մեջ:	Գիտափորձի տեսակները: Անբասիր, անվերջ, իդեալական գիտափորձեր:	2	ՊԳ1,3 ԼԳ 2,3
5.	Գիտափորձի արտաքին և ներքին վալիդականություն:	Արտաքին և ներքին վալիդականության էությունը: Ներքին վալիդականության վրա ազդող գործոնները:	2	ՊԳ 3 ԼԳ 2
6.	Գիրափորձի պլանավորումը հոգեբանության մեջ	Գիտափորձի պլանավորման հիմնական փուլերը: Կախյալ և անկախ փոփոխականներ: Փորձարարական և ստուգիչ խմբեր: Միջխմբային և ներխմբային փոփոխականների վերահսկում:	2	ՊԳ1, 3 ԼԳ 2
7.	Սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում:	Պատահական ընտրանքով պլան: Զույգերով խմբավորված հետազոտվողների պլան: Ներխմբային դասավորություն: Կրկնակի չափումներով պլան: Փորձարկվողի կորուստ:	2	ՊԳ2, 3
8.	Հետազոտության քանակական և որակական	Համահարաբերակցական հետազոտություն: Հարցման,	2	ՊԳ1,2

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

	պլաններ	դիտման մեթոդների առավելություններն ու թերությունները: Արխիվային, էթնոգրաֆիկ հետազոտություններ, առանձին դեպքի պատմություն: Քանակական և որակական պլանների համեմատություն:		ԼԳ 2,3
9.	Գիտական հետազոտության փուլերը:	Հետազոտական գործընթացի հիմնական փուլերը: Վարկածների տեսակները: Գիտական աշխատանքի կառուցվածքը և նրան ներկայացվող պահանջները:	1	ՊԳ1,3
10.	Գիտության մեջ կիրառվող հնարքները: Գիտական մտավախության տեսակները	Կեղտոտ հնարքներ՝ ֆաբրիկացիա և ֆալսիֆիկացիա: Կասկածելի հնարքներ: Մաքուր հնարքներ: Ֆոբիաների առաջացման պատճառները և տեսակները:	1	ՊԳ1,3 ԼԳ 3
11.	Գիտափորձի արդյունքների առաջնային և երկրորդական վիճակագրական մշակման մեթոդներ	Ընտրական միջին մեծություն, դիսպերսիա, մեդիանա, մոդա հասկացությունները հոգեբանության մեջ: Փորձարարական տվյալների երկրորդական վիճակագրական վերլուծության մեթոդների դասակարգումը:	2	ՊԳ1,3 ԼԳ 2,3

10. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Ավանեսյան Հ.Մ. Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ: -Եր.: Էդիթ Պրինտ, – 288 էջ:	2010
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Արզումանյան Ս. Հոգեբանություն: - Եր., Զանկակ-97, 176 էջ:	2003
2.	Психологическая диагностика. / Под ред. М.К. Акимовой, К.М.Гуревича. – СПб.: Питер, 652с.	2003

Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.	https://www.wonderzine.com/wonderzine/health/wellness/236063-psychological-experiments	

11. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

11.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

11.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[10]
1.	Փորձարարական հոգեբանության ծագումը, առարկան	Է. Վեբերի, Գ. Հելմհոլցի, Գ. Էբինհաուզի, Ս. Հոլի և այլ խոշորագույն գիտնականների ներդրումը փորձարարական հոգեբանության զարգացման գործում: Փորձարարական հոգեբանության առարկան և խնդիրները:	2	հարցում, քննարկում	ՊԳ1,2 ԼԳ 2
2.	Փորձարարական հոգեբանական դպրոցներ:	Գերմանական դպրոցը: Ֆրանցիական դպրոցը: Վյուրցբյուրգյան դպրոցը: Անգլիական դպրոցը: Ամերիկյան դպրոցը: Ռուսական դպրոցը:	4	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1 ԼԳ3
3.	Չափողական սանդղակներ և վիճակագրության պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդներ	Անվանական, հերթականության, ինտերվալային, հարաբերությունների սանդղակներ:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1,3

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

4.	Գիտափորձի մեթոդի էությունը, դերն ու նշանակությունը հոգեբանության մեջ:	Գիտափորձի տեսակները: Անբասիր, անվերջ, իդեալական գիտափորձեր:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1,3 ԼԳ 2,3
5.	Գիտափորձի արտաքին և ներքին վալիդականություն:	Արտաքին և ներքին վալիդականության էությունը: Ներքին վալիդականության վրա ազդող գործոնները:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ 3 ԼԳ 2
6.	Գիրափորձի պլանավորումը հոգեբանության մեջ	Պատահական ընտրություն: Զույգերով ընտրություն: Ներխմբային դասավորություն: Կրկնակի չափումներով պլանավորում:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1, 3 ԼԳ 2
7.	Սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում:	Ուսուցում քնած ժամանակ: Սոցիալական դեպրիվացիա և սոցիալական ամրապնդում: Պերցեպտիվ պաշտպանություն:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ2, 3
8.	Հետազոտության քանակական և որակական պլաններ	Արխիվային, էթնոգրաֆիկ հետազոտություններ, առանձին դեպքի պատմություն: Քանակական և որակական պլանների համեմատություն:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1,2 ԼԳ 2,3
9.	Գիտական հետազոտության փուլերը:	Հետազոտական գործընթացի հիմնական փուլերը: Վարկածների տեսակները: Գիտական աշխատանքի կառուցվածքը և նրան ներկայացվող պահանջները:	2	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1,3
10	Գիտության մեջ կիրառվող	Կեղտոտ հնարքներ՝ ֆաբրիկացիա և ֆալսիֆիկացիա: Կասկածելի հնարքներ: Մաքուր	2	հարցում, քննարկում,	ՊԳ1,3

.	հնարքները:	հնարքներ: Ֆոբիաների առաջացման պատճառները և տեսակները:		բանավիճային ինտերակցիա	ԼԳ 3
11.	Գիտափորձի արդյունքների առաջնային և երկրորդական վիճակագրական մշակման մեթոդներ	Ընտրական միջին մեծություն, դիսպերսիա, մեդիանա, մոդա հասկացությունները հոգեբանության մեջ: Փորձարարական տվյալների երկրորդական վիճակագրական վերլուծության մեթոդների դասակարգումը:	4	հարցում, քննարկում, բանավիճային ինտերակցիա	ՊԳ1,3 ԼԳ 2,3

11.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[11]
1.	Հոտորնի գիտափորձը: Միլգրեմի գիտափորձը:	Աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնները: Հեղինակությունների դերն ուազդեցությունը մարդու վարքի վրա:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1

[11] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն4

2.	Ռինգելմանի գիտափորձը: <<Ես և ուրիշները>> գիտափորձը:	Մարդու աշխատանքի արդյունավետությունը կոլեկտիվում: Դիրքորոշում, ներշնչանք:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1
3.	Ստենդֆորդի բանտային գիտափորձը: <<Հրեշավոր>> գիտափորձը:	Սոցիալական միջավայրի ազդեցությունը անձի վրա: Ներշնչվանք, դրա ազդեցությունը:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1
4.	<<Ավերսիա>> նախագիծը: Կ. Լենդիսի գիտափորձերը: <<Փոքրիկ Ալբերտ>> գիտափորձը:	Սեռական ուղղվածությունը և դրա վերափոխումը: Վախերի ծագումնաբանությունը և ազդեցությունը անձի վրա:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1
5.	Ձեռքբերված անօգնականություն գիտափորձը: Տղա, ով դաստիարակվել է որպես աղջիկ գիտափորձը:	Անձի դիրքորոշումները, կոնսաբանական և սոցիալական գործորրեի փախազդեցությունը:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1
6.	Ա.Բենդուրայի <<Տիկնիկ Բոբո>> գիտափորձը: Ս. Աշի գիտափորձը:	Ագրեսիայի տեսակները: Կոնֆորմիզմի դրսևորումները:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1
7.	Ս. Վալինսի գիտափորձը: Յ. Մենգելեի գիտափորձը:	Բժշկական միջամտությունները և դրանց ազդեցությունը ազգի հոգեկանի վրա: Հույզերի առաջացման պատճառները:	4	Ռեֆերատ, բանավոր հարցում, քննարկում	ԷԱ1

11.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[12]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[13]
1.	Հետազոտություն քանակական պլանով	Գիտափորձ, հարցաթերթ, թեստ	Ձեկույց	3 շաբաթ	գրավոր	
2.	Հետազոտություն որակական պլանով	Էթնոգրաֆիկ հետազոտություն, առանձին դեպքի նկարագրություն	Ձեկույց	6 շաբաթ	գրավոր	

12. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[14]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Պրոեկտոր, Smartboard
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Համակարգիչներ
Համակարգչային ծրագրեր	PowerPoint, Excell
Այլ	

[12] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[13] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[14] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

13. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[15]:

13.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

13.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է գրավոր քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

13.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

---

[15]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկված հարցեր.**

1. Փորձարարական հոգեբանության ծագումն ու զարգացումը
2. Գերմանական փորձարարական դպրոցը
3. Ֆրանսիական փորձարարական դպրոցը
4. Վյուրցբյուրգյան փորձարարական դպրոցը
5. Անգլիական և ամերիկյան փորձարարական դպրոցը
6. Փորձարարական հոգեբանության զարգացումը Ռուսաստանում
7. Հասկացություն հոգեչափման մասին, չափման տեսակները
8. Պարամետրիկ սանդղակները
9. Ոչ պարամետրիկ սանդղակները
10. Գիտափորձի մեթոդի ընդհանուր բնութագիրը
11. Գիտափորձի արտաքին և ներքին վալիդականությունը
12. Գիտափորձի ներքին վալիդականության վրա ազդող գործոնները
13. Կախյալ և անկախ փոփոխականները: Փորձարարական և ստուգիչ խմբեր
14. Միջխմբային և ներխմբային փոփոխականների վերահսկումը: Քվազիփորձարարական պլանները:
15. Գործոնային և ֆունկցիոնալ պլանները
16. Պատահական և զույգերով ընտրությունը
17. Ներխմբային դասավորություն և կրկնակի չափումներով պլանավորումը
18. Գիտափորձի վերահսկման տիպերը

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկվող թեմաները.**

1. Հոգեբանական հետազոտության տեսակները
2. Հետազոտության քանակական պլանները
3. Հետազոտության որակական պլանները
4. Գիտական հետազոտության փուլերը
5. Վարկածի ձևակերպումն ու տեսակները
6. Գիտության մեջ կիրառվող կեղտոտ հնարքները
7. Գիտության մեջ կիրառվող կասկածելի և մաքուր հնարքները
8. Գիտափորձի արդյունքների առաջնային վիճակագրական մշակման մեթոդները
9. Գիտափորձի արդյունքների երկրորդական վիճակագրական մշակման մեթոդները
10. Գիտափորձի արդյունքների ներկայացման ձևերը: Գիտական մտավախության առաջացման պատճառներն ու տեսակները
11. Հետազոտողի և հետազոտվողի անձն ու գործունեությունը
12. Գիտական աշխատանքի կառուցվածքը, նրան ներկայացվող պահանջները
13. Հետազոտողի աշխատանքի բարոյագիտական սկզբունքները, բարոյագիտական նորմերը
14. Հոտորնի գիտափորձը: Միլգրեմի գիտափորձը: Ստենդֆորդի բանտային գիտափորձը:
15. Ռինգելմանի գիտափորձը: <<Ես և ուրիշները>> գիտափորձը: <<Հրեշավոր>> գիտափորձը:

16. <<Ավերսիա>> նախագիծը: Կ. Լենդիսի գիտափորձերը: <<Փոքրիկ Ալբերտ>> գիտափորձը:

17. Ձեռքբերված անօգնականություն գիտափորձը: Տղա, ով դաստիարակվել է որպես աղջիկ գիտափորձը: Ա.Բենդուրայի <<Տիկնիկ Բոբո>> գիտափորձը:

18. Ս. Վալինսի գիտափորձը: Ս. Աշի գիտափորձը: Յ. Մենգելեի գիտափորձը:

13.4. Գնահատման չափանիշները[16].

- Տեսական գիտելիքները 20:
- Գործնական աշխատանքները 20:
- Լաբորատոր աշխատանքները 20:
- Ինքնուրույն աշխատանքը 20:

[16] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **____031301.00.6 Հոգեբանություն _____**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **___031301.01.6___Հոգեբանություն_____**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ _____Բակալավր_____
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Առկա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՄՀ/բ – 011 Փորձարարական հոգեբանություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	5 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 4-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	50	Դասախոսություն	22
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	24
			Գործնական աշխատանք	24
	Ինքնուրույն	100		
	Ընդամենը	150		
Ստուգման ձևը	Գրավոր քննություն			
Դասընթացի նպատակը	Զինել գիտելիքներով փորձարարական հետազոտական մեթոդների վերաբերյալ և սովորեցնել իրականացնել հետազոտություն, կատարել արդյունքների վերլուծություն:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* ✓ հոգեբանական փորձարարական հոգեբանության առարկայի հիմնական հասկացությունները, մեթոդաբանության սկզբունքները, հոգեբանական մեթոդների առավելություններն ու թերությունները, ✓ չափողական սանդղակները, ✓ վիճակագրության պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդները, ✓ գիտափորձի պլանավորման ու իրականացման գործընթացը, *Հմտություն* ✓ գիտության մեջ կիրառվող հնարքներին, ✓ հետազոտվողներին ներկայացվող բարոյագիտական պահանջներին: *Կարողունակություն* ✓ ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի իմացություն, ✓ իրականացնել հետազոտություն, ✓ կատարել արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն, ✓ ներկայացնել արդյունքները սխեմաների, դիագրամների, գրաֆիկների տեսքով, ✓ առաջ քաշել վարկածներ, ✓ որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն			

	եզրահանգումներ:
Դասընթացի բովանդակությունը	1. Փորձարարական հոգեբանության ծագումը, առարկան: 2. Փորձարարական հոգեբանական դպրոցներ: 3. Չափողական սանդղակներ: 4. Գիտափորձի մեթոդի էությունը, դերն ու նշանակությունը հոգեբանության մեջ: 5. Գիտափորձի արտաքին և ներքին վալիդականություն: 6. Գիրափորձի պլանավորումը հոգեբանության մեջ: 7. Գիրափորձի պլանավորման հատուկ մեթոդներ: 8. Սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում: 9. Գիտափորձի վերահսկման հիմնախնդիրը: 10. Սուբյեկտիվ փոփոխականների վերահսկում: 11. Հոգեբանական հետազոտության տեսակները, խնդիրներն ու առանձնահատկությունները: 12. Հետազոտության քանակական և որակական պլաններ: 13. Գիտական հետազոտության փուլերը: 14. Գիտության մեջ կիրառվող հնարքները: 15. Գիտական մտավախության տեսակները: 16. Գիտության մեջ կիրառվող հնարքները: 17. Գիտափորձի արդյունքների առաջնային և երկրորդական վիճակագրական մշակման մեթոդներ: 18. Գիտափորձի արդյունքների ներկայացման ձևերը: 19. Հետազոտողի և հետազոտվողի անձն ու գործունեությունը:
Գնահատման մեթոդները և չափանիշները	Դասընթացի կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատում՝ 1.Մասնակցությունը դասընթացին(ընդհանուր գնահատականի 20%-ը կամ 20 միավոր) ● Գնահատման մեթոդը՝ -հաճախումների հաշվառում ● Գնահատման չափանիշը -ներկայություն 2.Մասնակցությունը գործնական աշխատանքներին(ընդհանուր գնահատականի 20%-ը կամ 20 միավոր) ● Գնահատման մեթոդը՝ -մասնակցությունը լսարանային քննարկումներին -բանավոր հարցման արդյունքների հաշվառում 3.Ինքնուրույն աշխատանքներ (ընդհանուր գնահատականի 10%-ը կամ 10միավոր) ● Գնահատման մեթոդը՝ -ռեֆերատների կատարում -դիտարկվող նյութի մասնագիտական վերլուծության ներկայացման որակ, -արևմտահայերեն տեքստերի վերլուծական բնույթի աշխատանքների ստուգում: 4.Գործնական հմտություններ(ընդհանուր գնահատականի 10%-ը կամ 10միավոր) ● Գնահատման մեթոդը՝

	-Միավորը տրվում է ուսանողին գործնական հանձնարարություններից դրական գնահատական ստանալու դեպքում:
Գրականություն	Պարտադիր 1. Ավանեսյան Հ.Մ. Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ: -Եր.: Էդիթ Պրինտ, – 288 էջ: